ԵԴ/9164/02/19

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՎԵՃԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

8 նոյեմբերի 2021 թվական քաղաք Երևան

ուսումնասիրելով ըստ հայցի Դավիթ Հակոբի Ղուկասյանի ընդդեմ Արմեն Վարդգեսի Խաչատրյանի՝ պայմանագրի 2.2 կետի պայմանը կատարված համարելու և բնակարանի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու պահանջների մասին թիվ ԵԴ/9164/02/19 քաղաքացիական գործով ենթակայության մասին վեճը լուծելու համար Վճռաբեկ դատարանի նախագահին դիմելու վերաբերյալ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2021 թվականի հոկտեմբերի 26-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Գործի դատավարական նախապատմությունը և ենթակայության հարցի լուծման համար էական նշանակություն ունեցող հանգամանքները.

1. Դավիթ Ղուկասյանը (այսուհետ նաև՝ Հայցվոր) 2019 թվականի ապրիլի 1-ին հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան ընդդեմ Արմեն Խաչատրյանի՝ կողմերի միջև կնքված պայմանագրի 2.2 կետի պայմանը կատարված համարելու և բնակարանի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու պահանջների մասին:

2. Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան)՝ 2019 թվականի ապրիլի 10-ի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ:

3. Առաջին ատյանի դատարանի՝ 2021 թվականի մարտի 4-ի որոշմամբ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի հիմքով գործն ըստ ենթակայության փոխանցվել է ՀՀ սնանկության դատարանին (այսուհետ նաև՝ Սնանկության դատարան)՝ թիվ ՍՆԴ/0667/04/19 սնանկության գործի շրջանակներում քննության համար, այն հիմնավորմամբ, որ թիվ ՍՆԴ/0667/04/19 սնանկության գործով կայացված վճռով Արմեն Խաչատրյանը ճանաչվել է սնանկ:

4. Սնանկության դատարանի՝ 2021 թվականի ապրիլի 7-ի որոշմամբ գործն ըստ ենթակայության փոխանցվել է Առաջին ատյանի դատարանին այն հիմնավորմամբ, որ թիվ ՍՆԴ/0667/04/19 սնանկության գործով «Մայկրեդիտ» ՈՒՎԿ ՍՊԸ-ն դիմել է դատարան՝ Արմինե Մելքոնյանին սնանկ ճանաչելու պահանջով, այսինքն՝ նշված սնանկության գործով պարտապան է հանդիսանում Արմինե Մելքոնյանը, իսկ թիվ ԵԴ/9164/02/19 քաղաքացիական գործով պատասխանողն Արմեն Խաչատրյանն է:

5. Առաջին ատյանի դատարանի 2021 թվականի մայիսի 5-ի որոշմամբ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի հիմքով գործն ըստ ենթակայության փոխանցվել է Սնանկության դատարանին՝ թիվ ՍՆԴ/2284/04/19 սնանկության գործի շրջանակներում քննության համար, այն հիմնավորմամբ, որ թիվ ՍՆԴ/2284/04/19 սնանկության գործով կայացված վճռով Արմեն Խաչատրյանը ճանաչվել է սնանկ:

6. Թիվ ԵԴ/9164/02/19 քաղաքացիական գործը 2021 թվականի մայիսի 13-ին մակագրվել է Սնանկության դատարանի դատավոր Տ. Փոլադյանին:

7. Սնանկության դատարանը 2021 թվականի մայիսի 21-ի որոշմամբ գործի ենթակայության շուրջ ծագած վեճը լուծելու նպատակով գործն ուղարկել է Վճռաբեկ դատարանի նախագահին՝ այն պատճառաբանությամբ, որ թիվ ԵԴ/9164/02/19 քաղաքացիական գործը Սնանկության դատարան է փոխանցվել ««Սնանկության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ ՀՕ-294-Ն ՀՀ օրենքի 72-րդ հոդվածի 10-րդ մասով սահմանված ժամկետի խախտմամբ, ուստի ենթակա չէ քննության Սնանկության դատարանի կողմից թիվ ՍՆԴ/2284/04/19 սնանկության գործի շրջանակներում:

8. Թիվ ԵԴ/9164/02/19 քաղաքացիական գործը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2021 թվականի հունիսի 28-ին:

9. Վճռաբեկ դատարանի նախագահի՝ 2021 թվականի հուլիսի 6-ի ՎԴ-1-Ե-6002 գրությամբ թիվ ԵԴ/9164/02/19 քաղաքացիական գործը վերադարձվել է Սնանկության դատարան՝ այն պատճառաբանությամբ, որ գործի ենթակայության շուրջ ծագած վեճը լուծելու դիմումի հիմնավորումով հաստատվում է ոչ թե գործի ենթակայության վերաբերյալ վեճի առկայությունը, այլ քաղաքացիական գործն օրենքով սահմանված ժամկետի խախտումով Սնանկության դատարանին հանձնելու հանգամանքը, որպիսի հարցի քննարկումը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 1-ին մասով և «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 6-րդ մասով ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահին վերապահված լիազորության շրջանակից դուրս է:

10. Սնանկության դատարանի՝ 2021 թվականի օգոստոսի 24-ի որոշմամբ գործն ըստ ենթակայության փոխանցվել է Առաջին ատյանի դատարանին այն հիմնավորմամբ, որ թիվ ԵԴ/9164/02/19 քաղաքացիական գործը Սնանկության դատարան է փոխանցվել ««Սնանկության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ ՀՕ-294-Ն ՀՀ օրենքի 72-րդ հոդվածի 10-րդ մասով սահմանված ժամկետի խախտումով:

11. Առաջին ատյանի դատարանը 2021 թվականի հոկտեմբերի 26-ի որոշմամբ գործի ենթակայության շուրջ ծագած վեճը լուծելու նպատակով գործն ուղարկել է Վճռաբեկ դատարանի նախագահին այն պատճառաբանությամբ, որ թիվ ՄՆԴ/2284/04/19 սնանկության գործով կայացված վճռով Արմեն Խաչատրյանը ճանաչվել է սնանկ, ուստի «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի հիմքով սույն քաղաքացիական գործը ենթակա է քննության Սնանկության դատարանի կողմից թիվ ՄՆԴ/2284/04/19 սնանկության գործի շրջանակներում: Միաժամանակ, Առաջին ատյանի դատարանը, անդրադառնալով գործն օրենքով սահմանված ժամկետի խախտմամբ ուղարկված լինելու վերաբերյալ Սնանկության դատարանի հիմնավորմանը, նշել է, որ պատասխանող Արմեն Խաչատրյանի ներկայացուցչի կողմից 2020 թվականի նոյեմբերի 4-ին միջնորդություն է ներկայացվել դատարան՝ սնանկության գործով կառավարչին, որպես շահագրգիռ անձի, քննվող գործի մասին ծանուցելու վերաբերյալ, ինչն էլ Առաջին ատյանի դատարանի կողմից բավարարվել է:

12. Թիվ ԵԴ/9164/02/19 քաղաքացիական գործը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2021 թվականի նոյեմբերի 1-ին:

Վճռաբեկ դատարանի նախագահի պատճառաբանությունները և եզրահանգումը.

13. Սույն գործով Վճռաբեկ դատարանի նախագահի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. *առկա՞ են արդյոք «Մնանկության մասին» ՀՀ օրենքով ամրագրված՝ գործի ենթակայության նախապայմանները՝ թիվ ԵԴ/9164/02/19 քաղաքացիական գործը Մնանկության դատարանում քննության համար:*

14. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Քաղաքացիական գործերը ենթակա են քննության առաջին ատյանի դատարանում, բացառությամբ «Մնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերի»:*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *«Դատարանը գործը հանձնում է սնանկության դատարանի քննությանը, եթե գործը քննելիս պարզվել է, որ այն ենթակա է քննության սնանկության դատարանում»:*

15. «Մնանկության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Մնանկության գործերի վարումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության սնանկության դատարանում (...): Մնանկության գործը վարվում է դատավորի կողմից միանձնյա»:*

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *«Մնանկ ճանաչված պարտապանի գույքի կազմում ներառված գույքի և իրավունքների, երրորդ անձին պատկանող ապահովված իրավունքի առարկայի, պարտապանի և պարտատիրոջ մասնակցությամբ կնքված, ներառյալ՝ պարտավորությունների կատարման ապահովման միջոցների պայմանագրերի առնչությամբ ծագած և պարտատերերի պահանջների բավարարման հնարավորության վրա ազդող վեճերով քաղաքացիական գործերը, բացառությամբ կառավարչի կողմից ներկայացվող հայցերով հարուցվող քաղաքացիական գործերի, քննում է սնանկության գործը վարող դատավորը նույն սնանկության գործի շրջանակում որպես առանձին քաղաքացիական գործեր (այսուհետ՝ առանձին քաղաքացիական գործեր)»:*

16. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Գործն ըստ տարածքային ընդդատության կամ ըստ ենթակայության ստացած դատարանը յոթնօրյա ժամկետում որոշում է կայացնում այն վարույթ ընդունելու կամ գործը Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու մասին, եթե համաձայն չէ գործի տարածքային ընդդատությանը կամ ենթակայությանը»:*

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Վճռաբեկ դատարանի նախագահը հնգօրյա ժամկետում որոշում է գործի ընդդատությունը կամ ենթակայությունը»:*

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ *«Սույն հոդվածով սահմանված կարգը կիրառվում է նաև վարչական կամ սնանկության դատարանի կողմից համապատասխանաբար վերահաստեղծված հայցադիմումի կամ հանձնված գործի նկատմամբ»:*

17. Սույն որոշման 14-16-րդ կետերում վկայակոչված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ քաղաքացիական գործերը, որպես կանոն, ենթակա են քննության առաջին ատյանի դատարանում: Այս ընդհանուր կանոնից բացառություն նախատեսված է «Սնանկության մասին» ՀՀ օրենքով: Նշված օրենքի համապատասխան իրավակարգավորումների համաձայն՝ սնանկության գործերի վարումն իրականացնում է Սնանկության դատարանը: Սնանկության դատարանը միաժամանակ իրականացնում է նաև սնանկության գործով պարտատերերի պահանջների բավարարման հնարավորության վրա ազդեցություն ունեցող այն քաղաքացիաիրավական վեճերի քննությունը, որոնք համապատասխանում են «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով սահմանված նախապայմաններին:

18. «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի վերլուծությունից հետևում է, որ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններն իրենց վարույթում գտնվող քաղաքացիական գործերը կարող են ըստ ենթակայության ուղարկել Սնանկության դատարան՝ պարզելով և հաշվի առնելով հետևյալ հանգամանքները.

1) քաղաքացիական գործով վեճը պետք է ծագած լինի սնանկ ճանաչված պարտապանի գույքի կազմում ներառված գույքի և իրավունքների, երրորդ անձին պատկանող ապահովված իրավունքի առարկայի, պարտապանի և պարտատիրոջ մասնակցությամբ կնքված, ներառյալ՝ պարտավորությունների կատարման ապահովման միջոցների պայմանագրերի առնչությամբ՝ բացառությամբ կառավարչի կողմից ներկայացվող հայցերով հարուցվող քաղաքացիական գործերի,

2) քաղաքացիական գործով ծագած վեճը պետք է ազդեցություն ունենա Սնանկության դատարանում հարուցված և վարվող սնանկության գործով պարտատերերի պահանջների բավարարման հնարավորության վրա:

19. Սույն քաղաքացիական գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է.

- Դավիթ Ղուկասյանը 2019 թվականի ապրիլի 1-ին հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան ընդդեմ Արմեն Խաչատրյանի՝ կողմերի միջև կնքված պայմանագրի 2.2 կետի պայմանը կատարված համարելու և ք. Երևան, Էրեբունի համայնք, Վարդաշեն 2-րդ փողոց, 2-րդ շենք, թիվ 81 բնակարանի նկատմամբ իր սեփականության իրավունքը ճանաչելու պահանջների մասին, այն հիմնավորմամբ, որ նշված պայմանագրի 2.1 կետով նախատեսված պարտավորությունն իր կողմից կատարվել է լրիվ ծավալով, որը հավաստվում է Արմեն Խաչատրյանին 20.000.000 (քսան միլիոն) ՀՀ դրամ գումար փոխանցելու վերաբերյալ ստացականով, որպիսի պարագայում նույն պայմանագրի 2.5 կետով և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 280-րդ հոդվածի ուժով Արմեն Խաչատրյանը, հօգուտ Դավիթ Ղուկասյանի, 03.04.2018 թվականի դրությամբ հրաժարվել է վերոնշյալ բնակարանի նկատմամբ սեփականության իրավունքից:

- Սնանկության դատարանը սույն գործն ըստ ենթակայության փոխանցել է Առաջին ատյանի դատարանին՝ այն հիմնավորմամբ, որ գործը Սնանկության դատարան է փոխանցվել ««Սնանկության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ ՀՕ-294-Ն ՀՀ օրենքի 72-րդ հոդվածի 10-րդ մասով սահմանված ժամկետի խախտմամբ:

- Առաջին ատյանի դատարանը գործի ենթակայության վերաբերյալ իր անհամաձայնությունը հիմնավորել է նրանով, որ թիվ ՍՆԴ/2284/04/19 սնանկության գործով կայացված վճռով Արմեն Խաչատրյանը ճանաչվել է սնանկ, ուստի «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի հիմքով սույն քաղաքացիական գործը ենթակա է քննության Սնանկության դատարանի կողմից թիվ ՍՆԴ/2284/04/19 սնանկության գործի շրջանակներում: Միաժամանակ, Առաջին ատյանի դատարանը, անդրադառնալով գործն օրենքով սահմանված ժամկետի խախտմամբ ուղարկված լինելու վերաբերյալ Սնանկության դատարանի հիմնավորմանը, նշել է, որ պատասխանող Արմեն Խաչատրյանի ներկայացուցչի կողմից 2020 թվականի նոյեմբերի 4-ին միջնորդություն է ներկայացվել դատարան՝ որպես շահագրգիռ անձի՝ սնանկության գործով կառավարչին քննվող գործի մասին ծանուցելու վերաբերյալ, ինչն էլ Առաջին ատյանի դատարանի կողմից բավարարվել է:

20. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 14-19-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ պետք է նախ փաստել, որ սույն քաղաքացիական գործով վեճի կողմ է հանդիսանում Արմեն Խաչատրյանը, ով թիվ ՍՆԴ/2284/04/19 սնանկության

գործով կայացված վճռով ճանաչվել է սնանկ: Սույն գործով հայցի առարկան ք. Երևան, Էրեբունի համայնք, Վարդաշեն 2-րդ փողոց, 2-րդ շենք, թիվ 81 բնակարանի նկատմամբ Հայցվորի սեփականության իրավունքի ճանաչման պահանջն է, որի ըստ էության լուծման արդյունքում պետք է որոշվի, թե կողմերից ում է պատկանում նշված գույքը: Այսինքն՝ վեճի լուծումն ազդեցություն է ունենալու Արմեն Խաչատրյանի՝ որպես թիվ ՍՆԴ/2284/04/19 սնանկության գործով պարտապանի գույքի կազմում ներառված գույքի ծավալի վրա և ըստ այդմ՝ սնանկության գործով պարտատերերի պահանջների բավարարման հնարավորության վրա:

Հետևաբար, գտնում եմ, որ առկա են «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված՝ թիվ ԵԴ/9164/02/19 քաղաքացիական գործը Սնանկության դատարանում թիվ ՍՆԴ/2284/04/19 սնանկության գործի շրջանակներում քննության առնելու համար անհրաժեշտ նախապայմանները:

21. Միաժամանակ անդրադառնալով գործի ենթակայության վերաբերյալ Սնանկության դատարանի հիմնավորմանը՝ հարկ է արձանագրել հետևյալը.

««Սնանկության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ ՀՕ-294-Ն ՀՀ օրենքի (ուժի մեջ է մտել 2020 թվականի ապրիլի 15-ից) 3-րդ հոդվածով Օրենքի 4-րդ հոդվածը խմբագրվել է:

Նույն օրենքի «Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ» վերտառությամբ 72-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ *«Հայաստանի Հանրապետության առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններում հարուցված՝ նույն օրենքի 3-րդ հոդվածին համապատասխանող գործերը նույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկամսյա ժամկետում, փոխանցվում են դատարան»:*

Նշված կարգավորումը, ունենալով անցումային բնույթ, ընթացակարգային կանոն է սահմանել ընդհանուր իրավասության դատարաններում հարուցված այն քաղաքացիական գործերը Սնանկության դատարան փոխանցելու ժամկետի վերաբերյալ, որոնք տվյալ կարգավորման ուժի մեջ մտնելու պահի դրությամբ արդեն իսկ համապատասխանել են Օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված ենթակայության նախապայմաններին: Միևնույն ժամանակ, որպես անցումային կարգավորում, վերը նշված ժամկետը կիրառելի չէ բոլոր այն դեպքերում, երբ հարուցված քաղաքացիական գործի՝ Օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված ենթակայության նախապայմաններն ի հայտ են եկել վերը նշված ժամկետը լրանալուց հետո:

Սույն գործի դատավարական փաստերի համաձայն՝ պատասխանող Արմեն Խաչատրյանի ներկայացուցչի կողմից 2020 թվականի նոյեմբերի 4-ին միջնորդություն է ներկայացվել դատարան՝ որպես շահագրգիռ անձի սնանկության գործով կառավարչին քննվող գործի մասին ծանուցելու վերաբերյալ՝ կից ներկայացնելով նաև Արմեն Խաչատրյանին սնանկ ճանաչելու վերաբերյալ Սնանկության դատարանի՝ 2020 թվականի հունիսի 10-ի թիվ ՍՆԴ/2284/04/19 վճռի պատճենը: Այսինքն՝ սույն գործի ենթակայության վրա ազդեցություն ունեցող վերը նշված հանգամանքն ի հայտ է եկել և Առաջին ատյանի դատարանին հայտնի է դարձել միայն 2020 թվականի նոյեմբերի 4-ին, հետևաբար ««Սնանկության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ ՀՕ-294-Ն ՀՀ օրենքի 72-րդ հոդվածի 10-րդ մասի կարգավորումը չի կարող սույն դեպքում կիրառելի համարվել:

Ընդ որում, անհրաժեշտ է արձանագրել, որ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների վարույթում գտնվող քաղաքացիական գործերն ըստ ենթակայության Սնանկության դատարան ուղարկելու հիմքերը սպառիչ կերպով թվարկված են «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասում: Իսկ նույն հոդվածի 6-րդ մասի բովանդակությունից հետևում է, որ ընդհանուր իրավասության դատարանից քաղաքացիական գործ ստանալու դեպքում սնանկության դատարանը յոթնօրյա ժամկետում որոշում է կայացնում այն վարույթ ընդունելու կամ գործը Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու մասին, ***եթե համաձայն չէ գործի ենթակայությանը***: Նման կարգավորումներից բխում է, որ Սնանկության դատարանն իրավասու է վարույթ չընդունել ընդհանուր իրավասության դատարանից ստացված քաղաքացիական գործը բացառապես այն դեպքում, երբ համարում է, որ գործը ենթակա չէ Սնանկության դատարանին: Ուստի, ««Սնանկության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ ՀՕ-294-Ն ՀՀ օրենքի 72-րդ հոդվածի 10-րդ մասով սահմանված ժամկետի խախտումը չի կարող իրավաչափ հիմնավորում համարվել՝ ըստ ենթակայության Սնանկության դատարան ուղարկված քաղաքացիական գործը վարույթ չընդունելու և այն ընդհանուր իրավասության դատարան վերադարձնելու համար:

Վերոգրյալի հաշվառմամբ գտնում եմ, որ թիվ ԵԴ/9164/02/19 քաղաքացիական գործը ենթակա է Սնանկության դատարանի քննությանը թիվ ՍՆԴ/2284/04/19 սնանկության գործի շրջանակում՝ որպես առանձին քաղաքացիական գործ:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 2-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

թիվ ԵԴ/9164/02/19 քաղաքացիական գործն ըստ հայցի Դավիթ Հակոբի Ղուկասյանի ընդդեմ Արմեն Վարդգեսի Խաչատրյանի՝ պայմանագրի 2.2 կետի պայմանը կատարված համարելու և բնակարանի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու պահանջների մասին, ենթակա է ՀՀ սնանկության դատարանին:

ԼԻԼԻԹ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ